

ԺԳ.

ԿԵՍԱՐԱՅԻՒՆ ԻՐ ԾՆՆԴԻԱՎԱՅՐԻՆ ՄԷՋ

ԵՒ

ԻՐ ՀԵՂԻՆԱԿԱՒՈՐ ԴԻՐՔԸ

ՀԱՆԴԷՊ ԷՋՄԻԱԾՆԱՅ ԵՒ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐՈՒՆ

(1629 — 1633)

Գրիգոր Կեսարացի Լեհաստանէն դարձին կ'երթայ իր ծննդավայրը և դարձեալ տեղւոյն եպիսկոպոսութիւնը ձեռք կ'առնէ (Առգաղարհ, էջ 2393): Դարանաղջիի գրելու ձեռն այնպէս կը հասկցուի թէ Կ. Պոլիսէն անցած պիտի ըլլայ: Անիկա կ'ըսէ թէ «Կեսարացի մեծն Գրիգորն երեկ ի Լեհաց աշխարհին եւ զնաց յերկիր իւր խաղաղութեամբ եւ Յովհաննէս եպիսկոպոսն(*) յերկիր իւր յեկեղեաց: Եւ Խուչն Ըստաւթոյ կու սիրեւ եւ անեկայն Անաստուսն եւ Չափարհն յմսկոսարն նստեւ եւ անեկայն Ուռուսի շարափանդայիցն: Եւ մեք յոչինչ չեաք խառնիր յառն եւ ի տուրն պատրիարքական մտիցն . . . » (Դարանաղջի, էջ 192): Վերոյիշեալ բողոքագիրը որ Մովսէս Կաթողիկոսի ուղղուած էր, նաեւ կը հաս-

(*) Յովհաննէս եպոս. Երզնկացի Պէկ Թիմուրի ձագն է որ Գրիգորի փոխանորդն էր եւ Կ. Պոլիս էր: